նարդ տասնորդամեդրի, խորանարդ հա֊
րիւրորդամեդրի, խորանարդ հազարոր֊
դամեդրի, ... հետ. վասն զի ըստ վե֊
րագոյն ասացելոցս մէկ խորանարդ
մեդրն է հազար խորանարդ տասնորդա֊
մեդր, իսկ խորանարդ մեդրին տասն֊
երորդն է հարիւր խորանարդ տասնոր֊
դամեդր. նոյնպէս ալ խորանարդ մե֊
դրի մը հարիւրորդն ու հազարորդը կ'ը֊
նեն բիւր խորանարդ հարիւրորդա֊
մեդր, և միլիոն խորանարդ հազարոր֊
դամեդր:

Հիմա ուզելով այս տարածութիւններուս
խորանարդ մեդրին հետ ունեցած վե֊
րաբերութիւնները ըմբռնել՝ ենթադրենք
թէ քովերնիս խել մը հաւասար քուե֊
ներ ունինք. ասոնցմէ թէ որ իրեք հատ
քովէ քով դնելու ըլլանք, և նոյնպէս եր֊
կու շարք իրեք իրեք քուէ քովէ քով
դրած առաջինին լայնքին աւելցընելու
ըլլանք նէ, բոլորին երեսները մէկտեղ
գալով Ճիշդ քառակուսի մը կը ձևա֊
ցընեն: Ահա որ այս կարգին վրայ Ճիշդ
իրեն նման ուրիշ երկու կարգ ալ շարե֊
լու ըլլանք՝ եղած ձևը դարձեալ խորա֊
նարդ մըն է. բայց այս խորանարդիս
կողմը պզտիկներուն կողման եռապա֊
տիկն է, վասն զի անոնցմէ իրեքին
վրայէ վրայ դրուելովը ձևացաւ. իսկ
տարածոյը անոնցմէ իւրաքանչիւրէն
քսանըեօթը անգամ աւելի է, վասն զի
անոնցմէ իրեք անգամ իրեք իրեք՝ այս֊
ինքն քսանըեօթը հատէն ձևացաւ:
Ասկից եթէ խորանարդի մը կողմը ու֊
րիշ խորանարդի մը կողման եռապա֊
տիկն է, անոր տարածոյն ալ երկրոր֊
դին տարածոյէն 27 անգամ մեծ կ'ըլ֊
լայ, որ է 3 թուոյն խորանարդը: Վո֊
խադարձաբար եթէ խորանարդի մը
կողմը ուրիշ խորանարդի մը կողման $\frac{1}{3}$
է, անոր տարածոյն ալ երկրորդին տա֊
րածոյին $\frac{1}{27}$ կ'ըլլայ: Այս օրինակս
ընդհանրացուցանելով կը տեսնենք որ
եթէ խորանարդի մը կողմը ուրիշ խո֊
րանարդի մը կողման տասնորդն է, ի֊
րեն տարածոյն ալ անոր տարածոյին
հազարորդը կ'ըլլայ. և փոխադարձա֊
բար եթէ խորանարդի մը կողմը ուրիշ
խորանարդի մը կողման տասնապատիկն
է, առաջնոյն տարածոյն ալ երկրորդին
տարածոյին հազարապատիկը կ'ըլլայ:

Ասատի, ինչպէս առաջ ալ տեսանք[1], գծական մեդրին յաջորդական ստորա֊
բաժանմունքները տասնորդական կար֊
գաւ կը յառաջատին. քառակուսի մե֊
դրին յաջորդական ստորաբաժանմունք֊
ները հարիւրորդական կարգաւ կը յա֊
ռաջատին. իսկ խորանարդ մեդրին յա֊
ջորդական ստորաբաժանմունքները հա֊
զարորդական կարգաւ կը յառաջատին:

(ԳԻՏՈՒ ՀԱՐՈՒՆԱԿՈՒԹ)

ՏՆՏԵՍԱԿԱՆ

Տանի ու խնձորը երբ կ'ուզես չորցնել՝ նախ կեղևէ ու չորս չորս կարէ և դիր փուռը քիչ մը պաղի: Իսկ թէ որ կ'ուզես տանձը ամբողջ չորցնել՝ դիր հողէ ամանի մէջ, ու ծածկէ վրան տանձին կեղևներովը. հացը փուռը գնելու աուն՝ զատուկ ալ դիր, և հացը հանելու աուն՝ զատուկ ալ հանէ, ու ամանէն դուրս հանած չարէ սապատի մը վրայ, ու նորէն փուռը դիր: Այսպէս չորնալէն ետև հողէ ամանին մէջ գուրս առած տանձին ջուրը չորցածներուն վրան լեցուր ու այնպէս պահէ:

Դեղ պահելու ևերը:

Աւ կանեփի խծուծ ու դեղձին վրան պատէ. ասանկ ընելէդ ետքը լուծուած դեղին մեղամոմի մէջ թաթխէ, որ շատ տաք չըլլայ: Մեղամոմը խծուծին չորս կողմը կեղև մը ձևացընելով՝ դրսի օդին հալսրդութիւնը կ'արգելու: Այս ամենը ընելէն ետքը՝ խոր փոսի մը մէջ զետեղէ դեղձերը ու նայէ որ նոյն տեղը խոնաւ չըլլայ:

Հինները երբոր ուզէին պտուղ մը պահել, լաւ չորցուցած աւազով կը լեցընէին այլ և այլ աման֊
ներ ու անոնց մէջ ուզած պտուղնին կը դնէին. ետքը այս ամաններուն կը թաղէին, և հինգ վեց ոտք բարձրութեամբ հողով վրանին կը ծածկէին: Այս կերպս ալ կրնայ յաջողիլ, միայն թէ թաղած տեղը խիստ չոր պէտք է ըլլայ, բայց միանգամայն դիտելու է ալ որ շատ տաք չըլլայ:

[1] Երես 174: